,,Խնամակալության և հոգաբարձության,, հանձնաժողովին և Գեղարքունիքի մարզպետարանի ,,Կանանց և երեխաների պաշտպանության,, բաժնին՝ հարցի կարգավորման համար, որի արդյունքում Երևանս համայնքի ,,Խնամակալության և հոգաբարձության,, հանձնաժողովը Աննա Հոխիկյանին պատասխանել է, որ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ երեխան Գևորգ Գևորգյանի բնակության վայրում իրեն լավ է զգում, գտնվում է կոկիկ և խնամված վիճակում, երեխան ցանկանում է բնակվել հայրական տանը, երեխայի կյանքին և առողջությանվ վտանգ չի սպառնում և այդ պայմաններում իրենք իրենց վերապահված լիազորությունների շրջանակում իրավասու չեն երեխային վերադարձնել մոր բանակության վայր, իսկ այդ հարցի կարգավորումը օրենքով վերապահված է դատարանին: Սակայն նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Երևանս համայնքի ,,Խնամակալության և հոգաբարձության,, հանձնաժողովը իր կողմից Աննա Հոխիկյանին տրված պատասխանում մատնանշված հանգամանքները պարզել է այդ հանգամանքները հասկանալու և իրավիճակը օբեկտիվորեն գնահատելու համար չորոկավորված մասնագետների ներգրավածությամբ և որոկավորում ունեցող մասնագետների ներգրավածությունը ապահովելու ուղությամբ համապատասխան աշխատանքներ չի կատարել:

Գեղարքունիքի մարզպետարանի ,,Կանանց և երեխաների պաշտպանության,, բաժնի աշխատակիցները Վ. Գետաշեն համայնքի ,,Խնամակալության և հոգաբարձության,, հանձնաժողովի անդամների հետ համատեղ ուսումնասիրության արդյունքում արձանագրել են, որ երեխան Գևորգ Գևորգյանի բնակության վայրում իրեն լավ է զգում, հաճախակի խաղում է իր խաղալիքներով, չունի ճնշվածություն, գտնվում է կոկիկ և խնամված վիճակում, Գևորգ Գևորգյանի տանը առկա են անհրաժեշտ բոլոր կոմունալ պայմանները, երեխան ցանկանում է բնակվել հոր տանը: Այնուհետև սահմանել են կարգ, ըստ որի երեխան շաբաթվա 4 օրերի ընթացքում հանձնվի մոր խնամքին, իսկ շաբաթվա հաջորդ 3 օրերի ընթացքում գտնվի հոր խնամքի ներքո, որը արձանագրվել է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների ներգրավվածությամբ: Սակայն հետագայում Գևորգ Գևորգյանը հրաժարվել է երեխային 4 օր հանձնել Աննա Հոխիկյանի խնամքին՝ պատճառաբանելով, որ երեխան չի ցանկանում տեղափոխվել մոր բնակության վայր, իսկ ինքը չի ցանկանում երեխայի կամքին հակառակ գործողություններ կատարել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Վ. Գետշաեն համայնքի համայնքապետարանի ,,Խնամակալության և հոգաբարձության,, հանձնաժողովի անդամների, սոցիալական ապահովության աշխատակցի, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մանկավարժի, բժշկի, հոգեբանի և երեխայի ծնողներ՝ Աննա Հոխիկյանի ու Գևորգ Գևորգյանի մասնակցությամբ կրկին կատարվել է համապատասխան ուսումնասիրություն, որից պարզ է դարձել, որ երեխան հուզական կապի մեջ է գտնվում և՛ հոր, և՛ մոր հետ, սիրում է երկուսին, սիրում է խաղալ հատկապես մոր հետ, հայրական տանը առկա են բոլոր անհրաժեշտ կոմունալ պայմանները, հայրական տանը երեխան գտնվում է կոկիկ, խնամված, առողջ, աշխույժ վիճակում, չունի որևէ ճնշվածություն, ցանկանում է սնվել կաթով, սակայն չի հստակեցնում, որ ցանկանում է սնվել մայրական կաթով, երեխայի կյանքին և առողջությանը վտանգ չի սպառնում, երեխայի մարմնի վրա բացակայում են բռնության հետքեր: Չնայած վերոնշված որակավորում ունեցող մասնագետները երեխայի վիճակը հոր տանը գնահատել են լավագույն կողմերով, սակայն արտահայտվել են, որ երեխայի տարիքը հաշվի առնելով՝ 2 տարեկան 10 ամսեկան, նպատակահարմար է, որ երեխան բնակվի մոր հետ համատեղ, սակայն արձանագրել են, որ երեխան այս պահին թեև ցանկանում է մոր հետ լինել, սակայն հրաժարվում է տեղափոխվել մոր բնակության վայր:

Վերոշարադրվածը հիմնավորվել է նյութերում եղած բացատրություններով, կազմված արձանագրություններով, պահանջված և նյութերին կցված մի շարք փաստաթղթերով:

Այսպիսով, նախապատրաստված նյութերով պարզվել և հիմնավորվել է, որ Դավիթ Գևորգյանն իր ցանկությամբ հոր՝ Գևորգ Գևորգյանի, գրկում եղած վիճակում, վերջինիս հետ Աննա Հոխիկյանի բնակության վայրից տեղափոխվել է հոր բնակության վայր և այլևս չի ցանկացել վերադառնալ մոր բնակության վայր, իսկ Գևորգ Գևորգյանը այդ ընթացքում չի խոչընդոտել երեխայի ազատ տեղաշարժը և երեխային Աննա Հոխիկյանի բնակության վայր վերադարձնելուց հրաժարվել է այն պատճառով, որ դա չի ցանկանում երեխան, բացի այդ ՀՀ քրեական օրենսգիրքը ծնողի կողմից երեխային առևանգելու վերաբերյալ որևէ դրույթ չի սահմանում, հետևաբար Գևորգ Գևորգյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցագործության դեպքը:

Աննա Հոխիկյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված սուտ մատնության հանցակազմը, քանի որ Աննա Հոխիկյանը ցանկություն չի